

Արքական մեղքի հետևանքն է, Այս նախադասութիւնը կարող է շատ անգամ սխալ կերպով գործ ածուել, Եթե մարդիկ երիտասարդների մարմինն են հողին յանձնում, մինչդեռ ծերերը դեռ ևս ուշախութեամբ արեգակի լոյսն են տեսնում, այն ժամանակ սխալ և անարդար կլինէր այդ երիտասարդների մահը իբրև մեղքերով թաղուած հիւանդ մարդու մահ մեկնելու, Եթէ ածխահանքերում գորշահրով մի տասը մարդ սպանւում է և նրանցից քսանն ազատուում են, այն ժամանակ մարդ չպէտք է ասէ, թէ այն քսան հոգին նրա համար ազատուեցին, որովհետեւ սուրբ էին: Եթէ մի քանի ծնողներ հանգստարանի մանկանց գերեզմանների շարքում մի քանի խաչեր են բարձրացրել, այն ժամանակ աւելի քան խստութիւն կլինէր, եթէ մարդ այստեղ մի առանձին մեղք փնտրել կամենար: Այս մտքով կատարելապէս մերժում է Քրիստոս որևէ դատավճիռ կարդալ այն դժբախտների վերայ, որոնց վերայ Սելավամի աշտարակը կործանուեց*)։ Սրանք առաւել վատ չեին քան այն մարդիկ, որոնք այդ կործանումից ազատուել էին: Մէկի մահը զանազան հանգամանքներում կարող է իւր մի առանձին մեղքի հետևանքը լինել, սակայն մեծ մասամբ այդ այդպէս չէ, ուստի և պէտք է մենք հեռու պահենք մեզ մեծամիտ փարիսեցու նման ասելուց՝ «Մահը մեղքի թոշակն է»։

Նմանապէս խօսել այն մասին, թէ արդեօք մարդիկ

ՄԵՂՔ ԵՒ ՄԱՀ

«Զի թոշակն մեղաց մահ է».
Հոռվմ. Զ. 23:

Մահը մեղքի հետևանքն է, Այս նախադասութիւնը կարող է շատ անգամ սխալ կերպով գործ ածուել, Եթե մարդիկ երիտասարդների մարմինն են հողին յանձնում, մինչդեռ ծերերը դեռ ևս ուշախութեամբ արեգակի լոյսն են տեսնում, այն ժամանակ սխալ և անարդար կլինէր այդ երիտասարդների մահը իբրև մեղքերով թաղուած հիւանդ մարդու մահ մեկնելու, Եթէ ածխահանքերում գորշահրով մի տասը մարդ սպանւում է և նրանցից քսանն ազատուում են, այն ժամանակ մարդ չպէտք է ասէ, թէ այն քսան հոգին նրա համար ազատուեցին, որովհետեւ սուրբ էին: Եթէ մի քանի ծնողներ հանգստարանի մանկանց գերեզմանների շարքում մի քանի խաչեր են բարձրացրել, այն ժամանակ աւելի քան խստութիւն կլինէր, եթէ մարդ այստեղ մի առանձին մեղք փնտրել կամենար: Այս մտքով կատարելապէս մերժում է Քրիստոս որևէ դատավճիռ կարդալ այն դժբախտների վերայ, որոնց վերայ Սելավամի աշտարակը կործանուեց*)։ Սրանք առաւել վատ չեին քան այն մարդիկ, որոնք այդ կործանումից ազատուել էին: Մէկի մահը զանազան հանգամանքներում կարող է իւր մի առանձին մեղքի հետևանքը լինել, սակայն մեծ մասամբ այդ այդպէս չէ, ուստի և պէտք է մենք հեռու պահենք մեզ մեծամիտ փարիսեցու նման ասելուց՝ «Մահը մեղքի թոշակն է»։

*) Ղուկ. ԺԳ. 4, 5.

կիմնելին, եթէ նրանք, ինչպէս հրեշտակները, սուրբ և
մաքուր լինելին, կամ արդեօք նրանք յաւիտեան երիտա-
սարդ կմնային, ոչ մի նպատակ չունի։ Մենք ճանա-
չում ենք մարդկանց, որոնք մեղքի տակ են և որոնք պէտք
մեռնեն, և «ինչպէս կլինէր, եթէ» խօսքերով օգուտ չենք
ստանալ։ Աւելի կարեւորն այն է, որ մենք մեղքի հատու-
ցումն խօսքից մեր կեանքի համար զործնական մի խրատ
քաղենք։

Մարդ կարող է հազարաւոր օրինակներով տեսնել, որ
մարդկային կեանքի տեսղութիւնը կախումն ունի Աստուծոյ
պատուիրանը կատարելուց։ Թէև մէկը ընդունում է մահը
ոչ իրեկ վարձ իւր տուաջուայ կամ յետազայ յարաքերու-
թեան, բայց մի համայնք, մի ընտանիք, մի ցեղ, մի ժո-
ղովուրդ աւելի կենսական զօրութիւն կունենայ, որքան
որ մեծ է նրա մէջ արդարութիւնը, սէրը և բարքերի
սրբութիւնը։ Մի ժողովրդի մէջ, երբ ցանկութիւնն ու-
անպարկեշտութիւնն աւելի ու աւելի են մեծանում, այն-
տեղ մահն է շրջում, նա զոհ է տանում յաճախ այնպիսի-
ներին, որոնք անձնապէս քիչ մեղք ունին, նա զոհ է
տանում երեխաներին կամ թոռներին, թեթևամիտ մարդ-
կանց պատճառով նրանց առաքինի կանանց, նա մօտենում
է շատ անգամ դանդաղ և անճանաչելի կերպով, սակայն
նա քիչ հունձ կունենայ այնտեղ, ուր բարոյական կրթու-
թիւնը մեծ է։ Երբ մի ժողովրդի մէջ ազահութեան
մեղքը մեծանում է, այնտեղ նա ցոյց է տալիս իրեն իրեկ
արմատ ինչպէս ամէն մի չարիքի, այնպէս էլ մահուան։
Թէև ազահն ինքը երբեմն յամառութեամբ երկար է ապրում
և մեծ հասակումն անգամ չի դադարում մեղք զործելուց,
սակայն ուրիշները մեռնում են նրա համար, որովհետեւ
նրանք պէտք է զրկանք կրէին նրանով, որ ազահը ոչինչ
չի տալիս, ոչինչ չի առնում, և նրանց թոյլ չի տալիս աշխա-
տելու։ Հէնց նրանով, որ ազահը հարկաւոր չափից աւելի է
գանձում, դրանով սպանում է նա նրանց։ Ահա այս մտքով
են ցոյց տալիս քաղաքների և երկրների մահազրքերում
մամոնայի մեղապարտ հոգու հետեանքները։ Եթէ մի որ

և է քաղաքում ջրի հոգսը, վատ նիւթերի արտահանութիւնը, լաւ բնակարանների շինութիւնը աչքաթող է եղած և կամ հարևանցօրէն է առաջ տարւում, այն ժամանակ մահը այդպիսի մեղքի հատուցումն է։ Արդարեւ, ում մեղքը կարող է համարուել, եթէ մի հարբեցող ժամանակից վաղ գերեզման իջնէ։ Ո՞վ է մեղաւոր, եթէ Ամերիկայի և Աւստրալիայի բնիկ ժողովուրդները բնաջինջ են լինում։ Ո՞վ է պատասխանատու, եթէ կան երկիրներ, ուր, հէնց առաջին տարին, փոքրիկ մանուկների կէսը գերեզման է իջնում։ Մեծ մեղքեր կան այնտեղ, ուր մեղքը կոչւում է, և երբ նրան կանչում են, նա դալիս է իսկոյն։

Այսպէս ուրեմն, ով մահուան դէմ կոռւել է կամենում, նա պարտաւոր է կոռւել մեղքի դէմ իւր զանազան ձևերի մէջ։ Մեղքը թոյլ չի տալիս իրեն թօթափելու, բայց մարդ յաջող պատնէշներ կանգնեցնելով սև հոսանքի առաջ, երկրի մի լաւ մասը կարող է ազատել։ Եկէք, ուրեմն, որքան որ մենք կարող ենք, մարդկային յարաբերութիւնների համար Աստուծոյ կամքը մեզ կանոն դարձնենք, որպէս զի դրանով մենք կեանքին ծառայենք և ոչ մահուանը։ Բայց եթէ այդ դէպքում էլ մահը մեր անկողնին մօտենայ, այն ժամանակ մենք զիտենք՝ մահից յետոյ մեզ սպասում է Յիսուս Քրիստոսի յաւիտենական թագաւորութիւնը։

Նառամանից թարգ.

Արտակ վարդապէտ.

